ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՕՀԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ ՊԱՐԳԵՎԻ

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ. ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕНЫЙ УНИВЕРСИТЕТ

ОГАНЯН ЛЕВОН ПАРГЕВОВИЧ

УСЛОВНОЕ НЕПРИМЕНЕНИЕ НАКАЗАНИЯ В СООТВЕТСТВИИ С УГОЛОВНЫМ КОДЕКСОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ, ПРОБЛЕМЫ, ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ. АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – “Уголовное право и криминология, уголовноисполнительое право”

ЕРЕВАН - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Գաբուզյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան

իրավ. գիտ. թեկնածու
Ա. Կ. Վարդապետյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Ոստիկանության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հուլիսի 3-ին, ժամը $14^{\underline{00}}$-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук,
профессор А. А. Габузян

Официальные оппоненты: доктор юридических наук,
профессор С. А. Дилбандян

кандидат юридических
наук А. К. Вардапетян

Ведущая организация: Образовательный комплекс Полиции РА

Защита состоится 3-ого июля 2014г. в 14^{00} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 2 июня 2014г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент В.Д. Аветисян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և աշխարհի շատ երկրներում, մեծ մասամբ կիրառվում են ազատազրկման հետ կապված պատիժներ, ինչը, թերևս, ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատժատեսակների արդյունավետության նկատմամբ թերահավատության հետևանք է: Գաղտնիք չէ, որ ազատազրկման հետ կապված պատիժները հանգեցնում են բազմաթիվ բացասական հետևանքների (սոցիալական կապերի խզում, հասարակությանը վերաինտեգրվելու դժվարություն, ընտանիքի նյութական վիճակի վատթարացում և այլն): Քրեական օրենսդրության մեջ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը ներառելու անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը պայմանավորված է հենց այս բացասական հետևանքներից խուսափելու ցանկությամբ:

Անվիճելի է, որ հանցագործությունների ժամանակին բացահայտումը, հանցանք կատարած անձանց հայտնաբերումը, նրանց պատասխանատվության կանչելը, արդարացի պատիժ նշանակելն ու կիրառելը կարող են էական դաստիարակչական ու կանխիչ նշանակություն ունենալ: Այնուամենայնիվ, ոչ միշտ է, որ հանցանք կատարած անձին պատժելը կամ քրեական պատասխանատվության ենթարկելը նպատակահարմար են և կարող են ծառայել քրեական իրավունքի ու օրենսդրության նպատակների իրագործմանը: Դրա համար էլ որոշակի հիմքերի ու պայմանների առկայության դեպքում օրենքը հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորություն է նախատեսում: Նման հնարավորություններից է դատարանի հետևությունն առ այն, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը քրեական իրավունքի առջև ծառացած խնդիրները լուծելու մեծ պոտենցիալ ունի: Մասնավորապես, դրա ճիշտ կիրառումը թույլ է տալիս իրագործելու հանցանք կատարած անձին ուղղելու, հանցագործությունների ընդհանուր կանխման նպատակները: Միևնույն ժամանակ պատիժը պայմանականորեն չկիրառելու՝ ՀՀ ՔՕ 70 հոդվածով սահմանված, դատարանին վերապահված իրավունքը, թույլ է տալիս կյանքի կոչելու ներկայումս խիստ հրատապ դարձած այնպիսի սկզբունք ինչպիսին քրեաիրավական հարկադրանքի տնտեսումն է:

Պետք է նշել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը իրավակիրառ պրակտիկայում հաճախ է կիրառվում: Ընդ որում, վերջին տարիներին պատժից պայմանականորեն ազատված անձանց թիվն աճում է: Այսպես՝ 2003թ. անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, տոկոսային բաշխվածությամբ կազմել է 6.1%, 2004թ.՝ 17.9%, 2005թ.՝ 23.9%, 2006թ.՝ 22.1%, 2007թ.՝ 30.5%, 2008թ.՝ 25.8%: 2012թ. ազատազրկված դատապարտվածների թվաքանակը կազմել է 2193 մարդ, նրանցից 762 նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի

կիրառվել: 2013թ. ազատազրկված դատապարտվածների թվաքանակը կազմել է 2179 մարդ, նրանցից 818 նկատմամբ նշանակված պատիժը պայմանա-կանորեն չի կիրառվել: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ ՀՀ ՔՕ նշված ինստիտուտի կարգավորումը աչքի է ընկնում թերություններով, բացերով ու սխալներով, ինչը դատական պրակտիկայում խնդիրներ է առաջացնում կամ կարող է առաջացնել: Ուստի պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի համակողմանի ուսումնասիրությունը և դրա հիման վրա օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը արդիական հիմնախնդիր է:

Թեմայի մշակվածության աստիճանը:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմնախնդիրների հետ կապված հարցերը հետազոտության են ենթարկվել ինչպես խորհրդային, այնպես էլ ժամանակակից իրավաբան-գիտնականների կողմից, որոնց շարքում պետք է ընդգծել Ա.Թ. Թովմասյանի, Մ.Վ Գրիգորյանի, Ի.Ն. Ալեկսեևի, Օ.Վ. Սուկմանովի, Ա. Աստրովսկու, Վ.Յու. Նեմանեժինի, Ի.Ա. Բուռլակովայի, Ս.Յու. Սկոբելինի, Ռիվզի, Ն.Ս. Տագանցևի, Յու.Մ. Բոզիևի, Ս.Վ. Բորիսովի, Ա.Վ. Գլուզդակովի, Վ.Ս. Եգորովի, Վ.Ի. Զարուբինի, Ա.Վ. Խրենովի, Ա.Վ. Ռագուլինի, Ե.Գ. Սմիրնովայի, Ս.Վ. Վեկլենկոյի, Դ.Վ. Տարասյուկի, Վ.Վ. Ֆոմինի, Ն.Յա. Ֆոմիչևի և այլոց աշխատությունները: Հետազոտության թեմային առնչվող հիմնախնդիր-ները դարձել են նաև թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների առարկա:

Այնուամենայնիվ, չնայած նշված հեղինակների աշխատություններում քննարկվել են այս ինստիտուտի հետ կապված առանձին հարցեր, պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի համալիր հետազոտություն ՀՀ-ում չի իրականացվել:

Բացի այդ, պատիժը պայմանականորեն չկիրառելու քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունների գերակշիռ մասը չի վերաբերում Հայաստանի Հանրապետությանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտը կազմում են պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի քրեաիրավական և կրիմինալոգիական այն տեսական ու գործնական հիմնախնդիրները, որոնք առկա են Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության առարկա են պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտին վերաբերող օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան:

Հետազոտության նպատակն ու խնդիրները:

Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում պատիժը պայմանականորեն չկիրառելու քրեաիրավական և կրիմինալոգիական տեսական ու գործնական առկա հիմնախնդիրների համապարփակ վերլուծությունն է:

Նշված նպատակից բխում են հետազոտության հետևյալ հիմնական խնդիրները.

- տեսական վերլուծության ենթարկել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները

- հետազոտել պատիժը պայմանականորեն չկիրառելուն վերաբերող քրեաիրավական նորմերի կիրառման կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկան և վեր հանել առկա հիմնախնդիրները,

- մշակել պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ օրենսդրության կատարելագործմանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Հետազոտության մեթոդոլոգիան և մեթոդիկան:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդները: Փորձառական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով կիրառվել են նաև այնպիսի հատուկ մեթոդներ, ինչպիսիք են՝ հարցումը, փաստաթղթերի հետազոտումը և վիճակագրական տվյալների վերլուծությունը:

Հետազոտության տեսական և իրավական հիմքերը:

Հետազոտության տեսական հիմքը ձևավորել են պատիժը պայմանակա-նորեն չկիրառելու քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրների գիտական վերլուծությանը նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրները: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Ա.Թ. Թովմասյանի, Մ.Վ Գրիգորյանի, Ա.Հ. Գաբուզյանի, Ի.Ն. Ալեկսեևի, Օ.Վ. Սուկմանովի, Ա. Աստրովսկու, Վ.Յու. Նեմանեժինի, Ի.Ա. Բուռլակովայի, Ս.Յու. Սկոբելինի, Ռիվզի, Ն.Ս. Տագանցևի, Յու.Մ. Բոգիևի, Ս.Վ. Բորիսովի, Ա.Վ. Գլուզդակովի, Վ.Ս. Եգորովի, Վ.Ի. Զարուբինի, Ա.Վ. Խրենովի, Ա.Վ. Ռագուլինի, Ե.Գ. Սմիրնովայի, Ս.Վ. Վեկլենկոյի, Դ.Վ. Տարասյուկի, Վ.Վ. Ֆոմինի, Ն.Յա. Ֆոմիչևի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական հիմքը կազմել են ՀՀ սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունը:

Հետազոտության փորձառական հիմքը:

Հետազոտության փորձառական հիմքը կազմել են պատիժը պայմանակա-նորեն չկիրառելու վերաբերյալ 2006-2014 թվականներին ՀՀ վճռաբեկ դատա-րանի կողմից կայացված նախադեպային որոշումները, դատական պրակտիկայի նյութեր (թվով 39 քրեական գործեր), ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի դատական պրակտիկայի ամփոփումը, ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված պաշտոնական վիճակագրությունը:

Միևնույն ժամանակ հետազոտության արդյունքների ներկայացուցչակա-նությունն ու արժանահավատությունն ապահովելու նպատակով ուսումնա-սիրվել և օգտագործվել են հետազոտության օբյեկտի և առարկայի կապակցու-թյամբ այլ վայրերում և այլ հեղինակների կողմից իրականացված ուսումնասի-րությունների արդյունքները:

Հետազոտության գիտական նորույթը:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ ՀՀ-ում ատենախոսության մակարդակով փորձ է արվել համալիր հետազոտել պատիժը

պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը՝ դատական պրակտիկայի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային որոշումների համատեքստում:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք հանգում են հետևյալին.

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է դատարանի հետևությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Դատապարտյալի՝ առանց պատիժը կրելու ուղղվելու հնարավորության մասին դատարանի եզրահանգումը, պետք է հիմնվի այնպիսի հանգամանքների գնահատման վրա, որոնք իրենց դերով ու նշանակությամբ հնարավորություն են տալիս կոնկրետ գործով գալ նման հետևության՝ պահպանելով պատժի անհատականացման սկզբունքը:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի՝

ա) կատարված արարքի ծանրությունը և վրա հասած վնասակար հետևանքները,

բ) տուժողի շահերը, նրան պատճառած վնասի հատուցման հարցը, եթե իհարկե դատապարտյալը հնարավորություն ունեցել է հատուցելու այդ վնասը, տուժողի և հանցավորի հաշտվելու հանգամանքը, այն դեպքերում, երբ հնարավոր չէ կիրառել ՀՀ ՔՕ 73 հոդվածը,

գ) հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը,

դ) հանցավորի անձնավորությունը. նրան տրված բնութագիրը, վարքագիծը հանցագործության ընթացքում և դրանից հետո, հանցագործության շարժառիթը, նպատակը, խնամքին այլ անձանց առկայությունը,

ե) մեղմացնող և ծանրացնող հանգամանքները. անհրաժեշտ է թեկուզ մեկ մեղմացնող հանգամանքի առկայություն և ծանրացնող հանգամանքի բացակայություն:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը պետք է օրենսդրորեն սահմանափակել: Ընդ որում, սահմանափակման հիմքում պետք է դրվի ոչ թե հանցագործության տեսակը, այլ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը, որովհետև հենց այդ պատիժն է արտացոլում կատարված արարքի և այն կատարողի վտանգավորության աստիճանը:

Առաջարկվում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը սահմանափակել մինչև առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքերով:

3. Ճիշտ կլինի նախատեսել փորձաշրջանի ժամկետի՝ դատարանի կողմից երկարաձգման հնարավորություն՝ որպես ուղղվելու լրացուցիչ հնարավորություն (պատիժը պայմանականորեն չկիրառելը վերցանելու փոխարեն), ինչպես նաև փորձաշրջանի ժամկետի կրճատում՝ դատապարտյալի՝ փորձաշրջանի ընթացքում պատշաճ վարքագիծը, դրանով իսկ ուղղվելը խթանելու նպատակով:

Սրա հետ կապված առաջարկվում է ՀՀ ՔՕ 70 հոդվածի 6-րդ մասը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց, ինչպես նաև անզգույշ հանցանք կատարելու դեպքում, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը:

Դատարանը կարող է նաև երկարաձգել փորձաշրջանի ժամանակը, բայց ոչ ավել քան 1 տարի ժամկետով»:

ՀՀ ՔՕ 70 հոդվածը լրացնել 8-րդ մասով՝ «Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, կարող է որոշում կայացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատվածությունը մարված համարելու մասին, եթե անցել է սահմանված փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսը:

Դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատվածությունը մարված համարելու մասին հարցը լուծում է, հաշվի առնելով դատապարտյալի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև փորձաշրջանի ընթացքում վերջինիս դրսևորած վարքագիծը»:

4. Դատարանները մեղադրական դատավճիռ կայացնելիս և պատիժը պայմանականորեն չկիրառելով, հաճախ պարտականություններ չեն դնում դատապարտյալի վրա: Մինչդեռ, պայմանականությունը պայման է նշանակում, իսկ պայմանն էլ պարտականություն է ենթադրում: Այս առումով, ճիշտ կլինի, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս, դատարանը պարտադիր որոշակի պարտականություններ դնի դատապարտյալի վրա:

Առաջարկվում է ՀՀ ՔՕ 70 հոդվածի 5 մասը շարադրել հետևյալ կերպ.

«Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա դնում է նրա ուղղմանը նպաստող պարտականություններ: Դատարանը կարող է դատապարտյալի վրա դնել հետևյալ պարտականությունները. դատարանի կողմից որոշված անձանց հետ հանդիպելուց խուսափել, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին հայտնել մշտական բնակության վայրի փոփոխության վերաբերյալ, բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, այցելել հոգեբանին, հատուցել տուժողին կամ նրա ընտանիքին պատճառված նյութական վնասը, հանրային աշխատանքներ իրականացնել: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ»:

5. Պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակը՝ առանց հասարակությունից մեկուսացնելու դատապարտյալի ուղղումը և վերասոցիալականացումն ապահովելն է: Փորձաշրջանը, որը նշանակվում է, պետք է հնարավորություն տա դա իրականացնելու, իսկ դրա ընթացքում դատապարտյալի վարքագիծը պետք է հնարավորություն տա եզրակացնելու, որ դատարանը չի սխալվել իր եզրահանգումներում: Ուստի, փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից նոր դիտավորյալ հանցանքի կատարումը պետք է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հիմք հանդիսանա: Այս տեսակետից պետք է փոփոխության ենթարկվի ՀՀ ՔՕ 70 հոդվածի 6-րդ մասը՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը միանշանակ վերացնելը կապելով փորձաշրջանի ընթացքում ցանկացած տեսակի դիտավորյալ հանցանք կատարելու հետ:

6. Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ դատապարտյալը նախկինում դիտավորյալ հանցանք է կատարած եղել, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել, ապա դատարանը պետք է վերացնի պատիժը պայմանականորեն չկիրառելը և վերջնական պատիժ որոշի հանցագործությունների համակցության կանոններով: Եթե պարզվում է, որ անձը նախկինում անզգույշ հանցանք է կատարած եղել, ապա դատարանը քննարկում է այն հարցը, թե արդյոք այդ հանցանքի կատարման փաստը խոչընդոտ կլիներ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար: Եթե դատարանը գտնում է, որ նախկինում կատարված անզգույշ հանցանքը այնպիսին է, որ կխոչընդոտեր պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշման կայացմանը, ապա վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և վերջնական պատիժ է որոշում հանցագործությունների համակցության կանոններով:

7. ՀՀ ՔՕ-ն չի կարգավորում այն հարցը, թե արդյոք հնարավոր է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել և միաժամանակ որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Քանի որ այս ինստիտուտների միջև մրցակցությունը բացակայում է և հնարավոր է իրավիճակ, որ կատարված հանցանքի և այն կատարողի վտանգավորությունը այնքան բարձր չլինեն, որ պատիժը իրականում կրելը անհրաժեշտ լինի, ապա օրենսդրորեն պետք է ամրապնդել, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելով դատարանը կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ գործող քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի հիմքի վրա բացահայտվել են պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի էությունը և առանձնահատկությունները, դրա կիրառման բացերն ու կատարելագործման ուղիները:

Կատարված հետազոտությունների արդյունքները կարող են նաև տեսական հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ կատարված ուսումնասիրությունները և եզրահանգումները, ներկայացված առաջարկներն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել և կիրառվել հասարակության և պետության կենսագործունեության տարբեր ոլորտներում, մասնավորապես՝

- օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության մեջ,
- իրավակիրառ պրակտիկայում, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների կայացման ընթացքում,
- մեթոդաբանական և գործնական այլ նպատակներով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Հետազոտության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ անցկացվել է դրա քննարկումն ու գրախոսությունը: Ուսումնասիրության արդյունքները արտացոլվել են հեղինակի հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ընդհանուր 4 պարագրաֆ ներառող 2 գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը պատրաստվել է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են դրա մշակվածության աստիճանը, տեսական, մեթոդաբանական, նորմատիվ և փորձառնական հիմքերը, ձևակերպվում են նպատակներն ու խնդիրները, ցույց է տրվում հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, շարադրվում են պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացվում է հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի իրավական բնույթը, ծագումը և զարգացումը»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆներից:

«Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի իրավական բնույթը» առաջին պարագրաֆում քննարկվում են պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական բնույթն ու հասկացությունը:

Անվիճելի է, որ հանցագործությունների ժամանակին բացահայտումը, հանցանք կատարած անձանց հայտնաբերումը, նրանց պատասխանատվության կանչելը, արդարացի պատիժ նշանակելն ու կիրառելը կարող են էական դաստիարակչական ու կանխիչ նշանակություն ունենալ: Այնուամենայնիվ, ոչ միշտ է, որ հանցանք կատարած անձին պատժելը կամ քրեական

պատասխանատվության ենթարկելը նպատակահարմար են և կարող են ծառայել քրեական իրավունքի ու օրենսդրության նպատակների իրագործմանը: Դրա համար էլ որոշակի հիմքերի ու պայմանների առկայության դեպքում օրենքը հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորություն է նախատեսում: Նման հնարավորություններից է դատարանի հետևությունն առ այն, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը քրեական իրավունքի առջև ծառացած խնդիրները լուծելու մեծ հեռանկար ունի: Մասնավորապես, դրա ճիշտ կիրառումը թույլ է տալիս իրագործելու հանցանք կատարած անձին ուղղելու, հանցագործությունների ընդհանուր կանխման նպատակները: Միևնույն ժամանակ պատիժը պայմանականորեն չկիրառելու՝ ՀՀ ՔՕ 70 հոդվածով սահմանված, դատարանին վերապահված իրավունքը թույլ է տալիս կյանքի կոչելու ներկայումս խիստ հրատապ դարձած այնպիսի սկզբունք, ինչպիսին քրեաիրավական հարկադրանքի տնտեսումն է:

Հեղինակը ավելացնում է նաև, որ նշանակված պատժը պայմանականորեն չկիրառելը (կամ ինչպես այլ կերպ է ասվում՝ պայմանական դատապարտում), իրենից ենթադրում է դատարանի կողմից պատժի նշանակման կամ կատարման հետաձգում՝ դատապարտված անձի համար որոշակի պարտականությունների և վարքագծի կանոնների սահմանմամբ՝ նրա վերասոցիալականացման և նոր հանցագործությունների կանխման նպատակով:

Վերլուծության ենթարկելով պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումները, հեղինակը հանգում է այն հետևության, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը անձին քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու տարատեսակների շարքին է դասվում և փաստացի հանդես գալիս որպես քրեական պատասխանատվության իրացման առանձնահատուկ ձև: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս, հանցանք կատարած անձին, ըստ էության, հնարավորություն է տրվում չկրելու պատիժը: Միևնույն ժամանակ նրա հետ որոշակի աշխատանքներ են իրականացվում (պետք է իրականացվեն), որոշակի հարկադրանք է իրագործվում, ինչը քրեական պատասխանատվության տարրեր է պարունակում:

Ատենախոսի կարծիքով, պատիժը պայմանականորեն չկիրառելը նպաստում է քրեաիրավական հարկադրանքի տնտեսմանը, պատժի, հատկապես ազատազրկման հետ կապված պատիժների բացասական հետևանքներից խուսափելուն, հանցանք կատարած անձի վերասոցիալականացմանն ու ուղղմանը:

«Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի ծագումն ու զարգացումը» երկրորդ պարագրաֆում քննարկվում են պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի ծագման ու զարգացման հետ կապված հարցերը:

Հեղինակը մանրամասն քննարկում է ինստիտուտի զարգացման տարբեր ժամանակաշրջանները:

Մանրամասն ուսումնասիրելով նախորդ սերնդի քրեական օրենսդրությունում տեղ գտած պայմանական ազատազրկման դատապարտման ինստիտուտը հարկադրաբար աշխատանքի մեջ ներգրավմամբ, հեղինակը հայտնել է իր կարծիքն առ այն, որ այդ միջոցը բավականին մարդասիրական է, քանի որ անձը ազատազրկում չկիրառելով, չի «սուզվում» հանցագործ միջավայրի մեջ և չի ենթարկվում այդ միջավայրի բացասական ազդեցությանը: Տվյալ ինստիտուտը օգտագործում էր ուղղման այնպիսի գործող մեթոդ, ինչպես աշխատանքով ուղղվելն է: Հանցագործություն կատարած անձը, ում հանդեպ վստահություն են ցուցաբերել ազատազրկման հետ չկապված պատիժ նշանակելով, ուներ ցուցաբերած վստահությունը արդարացնելու և ուղղման ճանապարհին կանգնելու իրական հնարավորություն: Շատ կարևոր է նաև այն, որ դատապարտյալը օգտակար աշխատանքով զբաղվելով, հնարավորություն ուներ մասնագիտություն ձեռք բերելու, ունենալու կայուն աշխատավարձ, և բացի դրանից ազատվելուց հետո հնարավորություն ուներ մնալու և աշխատելու այդ ընկերություններում, նրանցից կացարան ստանալ, ունենալ կայուն նյութական բազա, ընտանիք ստեղծել:

Ամփոփելով ասվածը, ատենախոսը նշում է, որ արտադրության տարբեր ճյուղերի կատարելագործման ժամանակակից պայմաններում հարկադրաբար աշխատանքի մեջ ներգրավմամբ պայմանական դատապարտման ինստիտուտը պատվավոր տեղ կունենար քրեաիրավական ներգործության միջոցների շարքում: Համենայն դեպս, կարելի էր հանրային աշխատանքների իրականացումը նախատեսել որպես պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատապարտյալի վրա դրվող պարտականություն:

Ատենախոսության երկրորդ՝ **«Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի հիմնախնդիրներն ու կատարելագործման ուղիները»** գլուխը բաղկացած է երկու պարագրաֆից:

«Պատիժը պայմանականորեն չկիրառելու օրենսդրական կարգավորումը և դատական պրակտիկան» առաջին պարագրաֆում քննարկվում են պատիժը պայմանականորեն չկիրառելու օրենսդրական կարգավորման և դատական պրակտիկայի հիմնահարցերը:

Վերլուծության ենթարկելով պատիժը պայմանականորեն չկիրառելու օրենսդրական կարգավորումը և դատական պրակտիկան, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու թե՛ տեսական և թե՛ պրակտիկ ամենաառանցքային հարցը կայանում է դրա հիմնավորման մեջ. նշված են արդյոք հիմնավորումները օրենքում, թե վերամշակված են դատական պրակտիկայով:

Սակայն, ըստ հեղինակի, պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա են որոշակի իրարամերժ մոտեցումներ՝ պայմանավորված ինչպես այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի դրույթները դիսպոզիտիվ են, այսինքն՝

դատարանի հայեցողությանն է թողնված պատիժը պայմանականորեն կիրառելու կամ չկիրառելու հնարավորությունը, այնպես էլ նրանով, որ դատական իրավակիրառ պրակտիկան միասնական չէ:

Վերոնշյալ հոդվածի ոչ այնքան հստակ, դատական հայեցողության մեծ հնարավորություններ պարունակող ձևակերպումը թույլ է տալիս դատարանին պատիժը պայմանականորեն չկիրառել ցանկացած քրեական գործի շրջանակում հիմք ընդունելով իր սեփական (սուբյեկտիվ) համոզվածությունը, որ անձի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը իրական կրելու:

Սրա հետ կապված, հեղինակը առաջարկում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի առնել՝ կատարված արարքի ծանրությունը և վրա հասած վնասակար հետևանքները, տուժողի շահերը, նրան պատճառած վնասի հատուցման հարցը, եթե իհարկե դատապարտյալը հնարավորություն ունեցել է հատուցելու այդ վնասը, տուժողի և հանցավորի հաշտվելու հանգամանքը, այն դեպքերում, երբ հնարավոր չէ կիրառել ՀՀ ՔՕ 73 հոդվածը, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը, հանցավորի անձնավորությունը. նրան տրված բնութագիրը, վարքագիծը հանցագործության ընթացքում և դրանից հետո, հանցագործության շարժառիթը, նպատակը, խնամքին այլ անձանց առկայությունը, մեղմացնող և ծանրացնող հանգամանքները. անհրաժեշտ է թեկուզ մեկ մեղմացնող հանգամանքի առկայություն և ծանրացնող հանգամանքի բացակայություն:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունի նաև հանցագործության տեսակը, դրա հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Վերջին հաշվով ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությանը մասնակցած անձը, հեղինակի կարծիքով, իրենից բավականաչափ բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում և ճիշտ չի լինի նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառել: Այլ հարց է, որ նման հանցանք կատարած անձի նկատմամբ կարող է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակվել և պայմանականորեն չկիրառվել:

Ակնհայտ է, որ միայն բոլոր գործոնների համալիր գնահատականը դատարանին հնարավորություն կտա բավարար քրեաիրավական լրիվությամբ ու հիմնավորվածությամբ իրականացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը:

Ատենախոսի կարծիքով, ճիշտ չէ, և արդարադատության շահերից ու բուն էությունից չի բխի, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու արգելք սահմանվի ելնելով հանցագործության ծանրության աստիճանից: Սահմանափակումը պետք է իրականացվի նշանակված պատժով: Ուստի պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը պետք է սահմանափակվի մինչև առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքերով: Սա, հեղինակի կարծիքով, այն ժամկետն է, որը վկայում

է անձի ու նրա կատարած արարքի ոչ այնքան բարձր հանրային վտանգավորության մասին:

«Վերահսկողությունը պատիժը պայմանականորեն չկիրառելու ընթացքում: Պրոբացիա» երկրորդ պարագրաֆում քննարկվում են պատիժը պայմանականորեն չկիրառելու ընթացքում դատապարտյալի նկատմամբ վերահսկողության հարցերը:

Վերլուծության արդյունքում հեղինակը հանգում է այն հետևության, որ թեև փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի վարքագծի նկատմամաբ որոշակի հակազդեցությունը պատիժը պայմանականորեն չկիրառելու ընթացքում իրականացվող վերահսկողության կարևոր բաղադրիչներից է, այնուամենայնիվ, որպես այդպիսին, պատժի կրումից պայմանականորեն ազատված դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն չի իրականացվում: Պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակը՝ առանց հասարակությունից մեկուսացնելու դատապարտյալի ուղղումը և վերասոցիալականացումն ապահովելն է: Փորձաշրջանը, որը նշանակվում է, պետք է հնարավորություն տա դա իրականացնելու, իսկ դրա ընթացքում դատապարտյալի վարքագիծը պետք է հնարավորություն տա եզրակացնելու, որ դատարանը չի սխալվել իր եզրահանգումներում: Ուստի, փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից նոր դիտավորյալ հանցանքի կատարումը պետք է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հիմք հանդիսանա: Այս տեսակետից, ըստ հեղինակի, պետք է փոփոխության ենթարկվի ՀՀ ՔՕ 70 հոդվածի 6-րդ մասը՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը միանշանակ վերացնելը կապելով փորձաշրջանի ընթացքում ցանկացած տեսակի դիտավորյալ հանցանք կատարելու հետ:

Ինչ վերաբերում է դատապարտյալի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելուն, ապա հեղինակի համոզմամբ, նման դեպքերում ճիշտ չէր լինի միանշանակ վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը, որովհետև այս դեպքերում չի կարելի միանշանակ խոսել այն մասին, որ անձը այլևս հնարավորություն չունի առանց հասարակությունից մեկուսացվելու ուղղվել: Այս դեպքում հարցի լուծումը պետք է թողնել դատարանին: Բացի այդ, ճիշտ կլիներ, շատ երկրների օրինակով, նման դեպքերի համար նախատեսել փորձաշրջանի ժամկետի երկարաձգում:

Ատենախոսի համոզմամբ, դա կհանգեցնի դատապարտյալի պատասխանատվության զգացման բարձրացմանը, ինչպես նաև հնարավորություն կտա գիտակցելու դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարման կարևորությունը: Դրանով իսկ, փաստորեն, փորձաշրջանի դերը պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտում կմեծանա:

Ամփոփելով ասվածը՝ ատենախոսը եզրակացնում է, որ փորձաշրջանի երկարաձգման, հետաձգման կամ պայմանական դատապարտվածի համար նախկինում սահմանված պարտականությունների լրացման հարցը յուրաքանչյուր դեպքում պետք է մանրամասն ուսումնասիրվի, հաշվի առնելով

փորձաշրջանը անցնելու պայմանների խախտման հանգամանքները և պատճառները: Բացի այդ անհրաժեշտ է պարզել դատապարտյալի թույլ տված խախտման պատճառները, գնահատել նրա վարքագիծը և նրա անձի վերաբերյալ ամբողջական տվյալները: Այնուամենայնիվ փորձաշրջանի երկարաձգումը բացառություն է փոխըմբռնման գնալու և հանցագործություն կատարելու հարցում դատապարտյալի հանդեպ վստահություն ցուցաբերելու հարցում, և հնարավոր է միայն բացառիկ դեպքերում:

Եզրակացությունում ներկայացվում են ատենախոսության հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է հանդիսանում դատարանի հետևությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Դատապարտյալի՝ առանց պատիժը կրելու ուղղվելու հնարավորության մասին դատարանի եզրահանգումը, պետք է հիմնվի այնպիսի հանգամանքների գնահատման վրա, որոնք իրենց դերով ու նշանակությամբ հնարավորություն են տալիս կոնկրետ գործով գալ նման հետևության՝ պահպանելով պատժի անհատականացման սկզբունքը:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի՝

ա) կատարված արարքի ծանրությունը և վրա հասած վնասակար հետևանքները:

բ) տուժողի շահերը, նրան պատճառած վնասի հատուցման հարցը, եթե իհարկե դատապարտյալը հնարավորություն ունեցել է հատուցելու այդ վնասը, տուժողի և հանցավորի հաշտվելու հանգամանքը, այն դեպքերում, երբ հնարավոր չէ կիրառել ՀՀ ՔՕ 73 հոդվածը:

գ) հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը:

դ) հանցավորի անձնավորությունը. նրան տրված բնութագիրը, վարքագիծը հանցագործության ընթացքում և դրանից հետո, հանցագործության շարժառիթը, նպատակը, խնամքին այլ անձանց առկայությունը:

ե) մեղմացնող և ծանրացնող հանգամանքները. անհրաժեշտ է թեկուզ մեկ մեղմացնող հանգամանքի առկայություն և ծանրացնող հանգամանքի բացակայություն:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը պետք է օրենսդրորեն սահմանափակել: Ընդ որում, սահմանափակման հիմքում պետք է դրվի ոչ թե հանցագործության տեսակը, այլ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը, որովհետև հենց այդ պատիժն է արտացոլում կատարված արարքի և այն կատարողի վտանգավորության աստիճանը:

Առաջարկվում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը սահմանափակել մինչև առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքերով:

Սա, հեղինակի կարծիքով, այն ժամկետն է, որը վկայում է անձի ու նրա կատարած արարքի ոչ այնքան բարձր հանրային վտանգավորության մասին:

Ատենախոսը նշում է նաև, որ արտասահմանյան երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններով ավելի պակաս ժամկետ է նախատեսված: Բացի այդ, այս ժամկետը այն ժամկետն է, որը հավասարազոր է ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար նախատեսված պատժի առավելագույն ժամկետին, իսկ որոշ դեպքերում միջին ծանրության ծանրության հանցագործությունների համար նախատեսված ժամկետներին:

Պատժի այս ժամկետը որոշ դեպքերում կարող է նաև ծանր հանցագործությունների համար սահմանված ժամկետների մեջ մտնել: Այս ժամկետը նախատեսելով՝ հեղինակը հիմնվում է իր կողմից պաշտպանվող այն գաղափարի վրա, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում, որպես կանոն, չի կարելի պատիժը պայմանականորեն չկիրառել:

3. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված որոշ հարցեր նույնպես ՀՀ ՔՕ-ով հստակ կարգավորված չեն: Մասնավորապես, կարգավորված չէ այն հարցը, թե ինչպես պետք է վարվի դատարանը այն դեպքերում, երբ փորձաշրջանի ընթացքում պարզվի, որ դատապարտյալը նախկինում կատարած է եղել մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության ենթարկված չի եղել: Հեղինակի կարծիքով, այդ դեպքերում լուծումը պետք է լինի հետևյալը.

Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ դատապարտյալը նախկինում դիտավորյալ հանցանք է կատարած եղել, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել, ապա դատարանը պետք է վերացնի պատիժը պայմանականորեն չկիրառելը և վերջնական պատիժ որոշի հանցագործությունների համակցության կանոններով: Եթե պարզվում է, որ անձը նախկինում անզգույշ հանցանք է կատարած եղել, ապա դատարանը քննարկում է այն հարցը, թե արդյոք այդ հանցանքի կատարման փաստը խոչընդոտ լիներ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար: Եթե դատարանը գտնում է, որ նախկինում կատարված անզգույշ հանցանքը այնպիսին է, որ կխոչընդոտեր պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշման կայացմանը, ապա վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և վերջնական պատիժ է որոշում հանցագործությունների համակցության կանոններով:

4. Ճիշտ կլինի նախատեսել փորձաշրջանի ժամկետի՝ դատարանի կողմից երակաձգման հնարավորություն՝ որպես ուղղվելու լրացուցիչ հնարավորություն (պատիժը պայմանականորեն չկիրառելը վերցանելու փոխարեն), ինչպես նաև փորձաշրջանի ժամկետի կրճատում՝ դատապարտյալի՝ փորձաշրջանի ընթացքում պատշաճ վարքագիծը, դրանով իսկ ուղղվելը խթանելու նպատակով:

Սրա հետ կապված առաջարկվում է ՀՀ ՔՕ 70 հոդվածի 6-րդ մասը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց, ինչպես նաև անզգույշ հանցանք կատարելու դեպքում, դատապարտյալի վարքագծի նկատմամբ

վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը:

Դատարանը կարող է նաև երկարաձգել փորձաշրջանի ժամանակը, բայց ոչ ավել քան 1 տարի ժամկետով»:

Փորձաշրջանի երկարաձգման, հետաձգման կամ պայմանական դատապարտվածի համար նախկինում սահմանված պարտականությունների լրացման հարցը յուրաքանչյուր դեպքում պետք է մանրամասն ուսումնասիրվի, հաշվի առնելով փորձաշրջանը անցնելու պայմանների խախտման հանգամանքները և պատճառները:

Բացի այդ անհրաժեշտ է պարզել դատապարտյալի թույլ տված խախտման պատճառները, գնահատել նրա վարքագիծը և նրա անձի վերաբերյալ ամբողջական տվյալները: Այնուամենայնիվ փորձաշրջանի երկարաձգումը բացառություն է փոխըմբռնման գնալու և հանցագործություն կատարելու հարցում դատապարտյալի հանդեպ վստահություն ցուցաբերելու հարցում, և հնարավոր միայն բացառիկ դեպքերում:

Դատապարտյալի հանդեպ վստահության ցուցաբերում է նաև փորձաշրջանի ընթացքում, հիմք ընդունելով դատապարտյալի անձը բնութագրող դրական տվյալները, նրա վարքագիծը, դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելն ու դատվածությունը մարված համարելը: ՀՀ ՔՕ 70 հոդվածը լրացնել 8-րդ մասով՝ «դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ, կարող է որոշում կայացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատվածությունը մարված համարելու մասին, եթե անցել է սահմանված փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսը:

Դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատվածությունը մարված համարելու մասին հարցը լուծում է, հաշվի առնելով դատապարտյալի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև վերջինիս դրսևորած վարքագիծը՝ փորձաշրջանի ընթացքում»:

Նման դրույթը խթան է, որպեսզի դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում հնարավորինս իրեն դրական դրսևորի, պատշաճորեն կատարի իր վրա դրված պարտականությունները:

5. Դատարանները մեղադրական դատավճիռ կայացնելիս և պատիժը պայմանականորեն չկիրառելով, հաճախ պարտականություններ չեն դնում դատապարտյալի վրա: Մինչդեռ, պայմանականությունը պայման է նշանակում, իսկ պայմանն էլ պարտականություն է ենթադրում: Այս առումով, ճիշտ կլինի, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս, դատարանը պարտադիր որոշակի պարտականություններ դնի դատապարտյալի վրա:

Առաջարկվում է ՀՀ ՔՕ 70 հոդվածի 5 մասը շարադրել հետևյալ կերպ.

«Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա դնում է նրա ուղղմանը նպաստող

պարտականություններ: Դատարանը կարող է դատապարտյալի վրա դնել հետևյալ պարտականությունները. Դատարանի կողմից որոշված անձանց հետ հանդիպելուց խուսափել, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին հայտնել մշտական բնակության վայրի փոփոխության վերաբերյալ, բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, այցելել հոգեբանին, հատուցել տուժողին կամ նրա ընտանիքին պատճառված նյութական վնասը, հանրային աշխատանքներ իրականացնել: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ»:

6. Պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակը՝ առանց հասարակությունից մեկուսացնելու դատապարտյալի ուղղումը և վերասոցիալականացումն ապահովելն է: Փորձաշրջանը, որը նշանակվում է, պետք է հնարավորություն տա դա իրականացնելու, իսկ դրա ընթացքում դատապարտյալի վարքագիծը պետք է հնարավորություն տա եզրակացնելու, որ դատարանը չի սխալվել իր եզրահանգումներում: Ուստի, փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից նոր դիտավորյալ հանցանքի կատարումը պետք է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հիմք հանդիսանա: Այս տեսակետից պետք է փոփոխության ենթարկվի ՀՀ ՔՕ 70 հոդվածի 6 մասը՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը միանշանակ վերացնելը՝ կապելով փորձաշրջանի ընթացքում ցանկացած տեսակի դիտավորյալ հանցանք կատարելու հետ:

7. Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ դատապարտյալը նախկինում դիտավորյալ հանցանք է կատարած եղել, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել, ապա դատարանը պետք է վերացնի պատիժը պայմանականորեն չկիրառելը և վերջնական պատիժ որոշի հանցագործությունների համակցության կանոններով: Եթե պարզվում է, որ անձը նախկինում անզգույշ հանցանք է կատարած եղել, ապա դատարանը քննարկում է այն հարցը, թե արդյոք այդ հանցանքի կատարման փաստը խոչընդոտ լիներ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար: Եթե դատարանը գտնում է, որ նախկինում կատարված անզգույշ հանցանքը այնպիսին է, որ կխոչընդոտեր պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշման կայացմանը, ապա վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և վերջնական պատիժ է որոշում հանցագործությունների համակցության կանոններով:

8. ՀՀ ՔՕ-ն չի կարգավորում այն հարցը, թե արդյոք հնարավոր է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել և միաժամանակ որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Քանի որ այս ինստիտուտների միջև մրցակցությունը բացակայում է և հնարավոր է իրավիճակ, որ կատարված հանցանքի և այն կատարողի վտանգավորությունը այնքան բարձր չեն, որ պատիժը իրականում կրելը

անհրաժեշտ լինի, ապա օրենսդրորեն պետք է ամրապնդել, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելով դատարանը կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 70-ի կիրառման հարցի շուրջ // «Պետություն և իրավունք», թիվ 4 (62), Երևան, 2013, էջեր 82-87,
2. Պրոբացիայի ծառայության եվրոպական երկրների փորձը // «Արդարադատություն», թիվ 1 (24), Երևան, 2014, էջեր 61-66,
3. Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառական ու գործնական փորձը Անգլիայում // «Կանթեղ», թիվ 1 (58), Երևան, 2014, էջեր 234-242,
4. Պրոբացիոն ծառայությունը ՀՀ-ում // «Դատական իշխանություն», թիվ 6 (180), Երևան, 2014, էջեր 20-25:

РЕЗЮМЕ

ОГАНЯН ЛЕВОН ПАРГЕВОВИЧ

УСЛОВНОЕ НЕПРИМЕНЕНИЕ НАКАЗАНИЯ В СООТВЕТСТВИИ С УГОЛОВНЫМ КОДЕКСОМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ, ПРОБЛЕМЫ, ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ.

Анализируя подходы об условном неприменении наказания, существующие в юридической литературе, автор приходит к выводу, что условное неприменение наказания является одним из видов освобождения лица от уголовной ответственности и наказания, и представляется в качестве индивидуального вида уголовной ответственности. При условном неприменении наказания лицу, совершившего преступление, предоставляется возможность избежать отбывания наказания. Одновременно с ним проводятся некоторые работы, применяются принудительные меры, в котором содержатся элементы уголовной ответственности.

По мнению автора условное неприменение наказания способствовает экономии уголовно-правового принуждения, избежания от негативных последствий наказания, особенно наказаний связанных с лишением свободы, исправлению лица, совершившего предступления.

Автор считает, что при условиях развития различных отраслей производства институт условного осуждения с вовлечением лица в принудителную работу, мог иметь почетное место среди мер уголовно-правового воздействия. Во всяком случае можно предусмотреть осуществление общественных работ как обязательство, возложенное на осужденного при условном неприменении наказания.

Самый важный вопрос, заключается в обосновании условного неприменения наказания: указаны обоснования в законе или переработаны в судебной практике.

Тем не менее, по мнению автора, об институте условного неприменения наказания в практике существуют некоторые противоречивые подходы, как в связи с тем, что положения статьи 70 Уголовного кодекса РА диспозитивны, то есть возможность условного приминения или неприменения наказания оставлено на усмотрение суда, так и с тем, что судебная правоприменительная практика не едина.

Оформление вышеуказанной статьи, обладающий большими возможностями судебного усмотрения, позволяет суду условно не применять наказание в рамках любого уголовного дела, основываясь на собственном (субьективном) убеждении, что исправление лица возможно без реального несения наказания.

Как упоменует автор, для условного неприменения наказания огромное значение имеет вид наказания, степень и характер его общественной опасности. Лицо, которое участвовало в совершении тяжкого или особо тяжкого преступления, по мнению автора, представляет большую общественную опасность и условное неприменение наказания не будет правильным в отношении этого лица. Другое дело, что к лицу, совершившего такое деяние, может быть назначено более мягкое наказания, чем предусмотрено законом, которое может условно не применятся.

По мнению автора, не правильно и не исходит из интересов правосудия, установление запрета условного неприменения наказания, исходя из степени тяжести преступления. Запрет должен осуществится назначенным наказанием. Следовательно, возможность условного неприменения наказания должна быть ограничена в случаях назначения наказания в виде лишения свободы максимум на три года. Это, по мнению автора, тот срок, который свидетельствует о небольшой общественной опасности лица и деяния, которое он совершил.

Цель условного неприменения наказания – обеспечение исправления осужденного без изоляции от общества. Назначенный испытательный срок должен дать возможность это осуществить, а в течении этого поведение осужденного должно позволить прийти к заключению, что суд не ошибся в своих выводах. Поэтому, в течении испытательного срока совершение нового умышленного преступления со стороны осужденного должно являтся основанием для устранения условного неприменения наказания. С этой точки зрения, по мнению автора, должны быть внесены изменения в часть 6 статьи 70 Уголовного кодекса РА: устранить условное неприменение наказания при совершении любого вида умышленного преступления в течении испытательного срока.

Что касается умышленного уклонения от обязанностей, возложенных на осужденного, то по убеждению автора, в таких случаях не будет правильным однозначное устранение условное неприменение наказания, поскольку в этих случаях нельзя говорить о том, что лицо больше не имеет возможность исправится без изоляции от общества. Этим же увеличивается роль испытательного срока в институте условного неприменения наказания.

Подводя итог, автор приходит к выводу, что вопрос, касательно продления, отмены испытательного срока или дополнения ранее установленных обязанностей для условно осужденного, в каждом случае должо рассматривается в деталях, принимая во внимание обстаятельства и причины нарушения условий испытательного срока. Кроме этого нужно выяснить причины нарушения, которые допустил осужденный, оценить его поведение и данные, характеризующие его личность.

SUMMARY

LEVON PARGEV OHANYAN

CONDITIONAL PUNISHMENT UNDER THE CRIMINAL CODE OF ARMENIA: THE PRESENT STATE, PROBLEMS AND WAYS OF IMPROVEMENT

Analyzing approaches on probation, existing in the legal literature, the author concludes that probation is a type of release of a person from criminal responsibility and punishment and is presented as a form of individual criminal responsibility. When the probation person who committed the crime, is given the opportunity to avoid punishment. Simultaneously there is carried out some work with him (will be held), coercive measures, which contains elements of criminal liability.

According to the author, the probation helps to save the criminal law enforcement, to avoid the negative effects of punishment, especially the punishment of deprivation of liberty, correcting the person who committed the crime.

The author believes (thinks) that under the conditions of the development of various industries Institute probation involving persons in forced labor, could have a place of honor among the measures under criminal law. In any case, we can provide public works as an obligation imposed on a convicted person under probation.

The most important question is the justification of the probation: are justification in law or recycled in judicial practice (jurisprudence).

Nevertheless, according to the author, about the institute probation in practice, there are some conflicting approaches, as due to the fact that the provisions of Article 70 of the Criminal Code of RA optionality, that is possible to demonstrate how the conditional or non- punishment is left to the discretion of the court, and that judicial enforcement practice is not uniform.

Making the above article, has great possibilities of judicial discretion, allows the court conditionally not to punish in any criminal case, based on its own (subjective) beliefs that a person may fix without actually incurring penalties.

As the author mentions, for the probation the kind of punishment has a great importanse, the degree and nature of its social danger. Person who participated in the commission of a grave or an especially grave crime, in my opinion, is a great danger

to the public and probation will not be correct in a relation to this person. Another thing is that a person who has committed such an act, can be assigned a lighter sentence than that prescribed by law, and may not be applied arbitrarily.

According to the author, it is not correct and not based on the interests of justice, prohibition of the probation, based on the severity of the crime. The ban should be realized with established punishment. Consequently, the ability of the probation should be limited in cases of punishment of imprisonment maximum of three years. This, according to the author, that term which indicates a small public (social) danger faces and acts that he has committed.

The purpose of probation - providing corrections predestined without isolation from society. Probation should enable it to carry out, and during this behavior convict should allow to conclude that the court had erred in its findings. Therefore, during the probation commission new intentional crimes committed by the convicted person should be the basis for the elimination of the probation. From this point of view, according to the author, there should be amended in Part 6 of Article 70 of the Criminal Code of RA: eliminate probation by associating with the commission of any kind of intentional crime during the probation period.

As for willful evasion of duties imposed on the convicted person, the author believes, in such cases would be the unequivocal elimination of probation, since in these cases we can not say that the person is no longer able to correct without isolation from society. This also increases the role of the probation period at the Institute of the probation.

To summarize, the author concludes that the question regarding the extension or withdrawal of probation or supplement previously assigned responsibilities for probation, in each case should be considered in detail, taking into account the circumstances surrounding and the reasons for breach of probation. In addition you need to identify the reasons for violations that allowed convicted evaluate its behavior and data characterizing his personality. Nevertheless, extension of the probationary period exception manifestation of confidence in the personality of the offender in the commission of the crime issues and possible only in exceptional cases.